

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «07» Դեկտեմբերի 2020թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է **«Կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար թղթադրամներ հաշվող, մետաղադրամներ հաշվող, ինչպես նաև մետաղադրամներ հաշվող և փաթեթավորող մեքենաներ ձեռք բերելու նպատակով գնանշման հարցման»** ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ամփոփ տեղեկատվությունը:

Գնանշման հարցմանը մասնակցել է երեք կազմակերպություն՝

1. **«Լիգա-Տեք» ՍՊԸ,**
2. **«Մանգո» ՍՊԸ,**
3. **«Սերվա-Պլյուս» ՍՊԸ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «04» Դեկտեմբերի 2020թ. նիստի ընթացքում ամփոփվել են վերը նշված գնանշման հարցման արդյունքները: **Լոտ 1-ով** (թղթադրամ հաշվող մեքենա) և **Լոտ 2-ով** (մետաղադրամներ հաշվող մեքենա)՝ հաղթող մասնակից է ճանաչվել՝ **«Մանգո» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը**, իսկ **Լոտ 3-ով** (մետաղադրամներ հաշվող և փաթեթավորող մեքենաներ)՝ **«Լիգա-Տեք» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը**:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օր ընկած ժամանակահատվածը:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Վահագն Խաչատրյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ